ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնք
Հասցե՝ Կ. Դեմիրճյանի անվ. հրապարակ 1
Հեռ.՝ (0226)43434 charentsavan.kotayk@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
«15» հունվարի 2025 թվականի N 1-Ա

ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ԹԻՎ 1 ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 14-րդ և 65-րդ հոդվածների դրույթներով. Չարենցավան համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Հաստատել Չարենցավան համայնքի ավագանու արտահերթ թիվ 1 նիստի օրակարգը՝

1) Չարենցավան համայնքի 2024 թվականի բյուջեի 4-րդ եռամսյակի եկամուտների և ծախսերի կատարողականի հաղորդման մասին:
2) Չարենցավան համայնքում մասնակցային բյուջետավորման գործընթաց սկսելու մասին:
3) Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Չարենցավան համայնքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 20-ի թիվ 111-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:
4) Սեփականություն իրավունքով «Վիտալենդ» ՍՊԸ-ին պատկանող հողատարածքի նպատակային և գործառնական նշանակության փոփոխության թույլտվություն տալու մասին:
5) Սեփականություն իրավունքով քաղաքացիներին պատկանող հողատարածքների նպատակային և գործառնական նշանակության փոփոխության թույլտվություն տալու մասին:
6) «Հատիկ» ՍՊԸ-ի կողմից նախատեսվող ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնքի Կարենիս բնակավայրի վարչական տարածքում գտնվող Գյումուշի լիթուդային պեմզայի հանքավայրում արդյունահանման աշխատանքների իրականացմանը նախնական համաձայնություն տալու մասին:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ-14	դեմ-1	ձեռնպահ-4
Առաքելյան Նորայր	Մալխասյան Նորիկ	Բաբայան Նարեկ
Բաբայան Արայիկ		Թադևոսյան Նունե
Գևորգյան Գևորգ		Խաչատրյան Արշակ
Դավթյան Կարեն		Պալյան Գարիկ
Եփրեմյան Բաբկեն		
Մակինյան Վարդան		
Մուքայելյան Վալերի		
Շահգալդյան Հակոբ		
Վարդանյան Նորայր		
Վարդանյան Սարգիս		
Վարդանյան Սևակ		
Պողոսյան Մնացական		
Պետրոսյան Ավետիք		
Պապոյան Դավիթ		

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Հ. Կ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնք
Հասցե՝ Կ. Դեմիրճյանի անվ. հրապարակ 1
Հեռ.՝ (0226)43434 charentsavan.kotayk@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«15» հունվարի 2025 թվականի N 2-Ա

ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ՉՈՐՐՈՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԵՎ ԾԱԽՍԵՐԻ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԻ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, 38-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի, Չարենցավան համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Ի գիտություն ընդունել Չարենցավան համայնքի 2024 թվականի բյուջեի չորրորդ եռամսյակի եկամուտների և ծախսերի կատարողականի մասին համայնքի ղեկավարի հաղորդումը (կցվում է):

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Կողմ-14 **դեմ-5** **ձեռնպահ-0**

Առաքելյան Նորայր
Բաբայան Արայիկ
Գևորգյան Գևորգ
Դավթյան Կարեն
Եփրեմյան Բաբկեն
Մակինյան Վարդան
Մուքայելյան Վալերի
Շահգալդյան Հակոբ
Վարդանյան Նորայր
Վարդանյան Սարգիս
Վարդանյան Սևակ
Բաբայան Նարեկ
Թադևոսյան Նունե
Խաչատրյան Արշակ
Մալխասյան Նորիկ
Պալյան Գարիկ

Պողոսյան Մնացական

Պետրոսյան Ավետիք

Պապոյան Դավիթ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Հ. Կ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ

ՀԱՂՈՐԴՈՒՄ ԱՎԱԳԱՆՈՒՆ ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ՉՈՐՐՈՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԵՎ ԾԱԽՍԵՐԻ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԻ ՄԱՍԻՆ

Չարենցավան համայնքի 2024 թվականի վարչական բյուջեի եկամտային մասով նախատեսված փաստացի եկամուտը կազմել է 1810849,8 հազար դրամ, որը տարեկան ճշտված պլանի նկատմամբ (1807499,3 հազար դրամ) կատարվել է 100,2%-ով(տե՛ս հատված 1):

<u>Ըստ հարկատեսակների կատարողականը ունի հետևյալ տեսքը.</u>

Գույքային հարկեր անշարժ գույքից փաստացի եկամուտը կազմել է 121952,9 հազար դրամ, որը կազմում է վարչական բյուջեի եկամուտների պլանի 75,1%-ը, իսկ տարեկան պլանի նկատմամբ կատարվել է 6,7%-ով:

Գույքային հարկեր այլ գույքից (փոխադրամիջոցների) գծով փաստացի եկամուտը կազմել է 218014,2 հազար դրամ, որը կազմում է վարչական բյուջեի ճշտված պլանով նախատեսված եկամուտների 102,7%-ը, իսկ տարեկան պլանի նկատմամբ կատարվել է 12%-ով:

Տեղական տուրքերի գծով փաստացի եկամուտը կազմել է 21050,2 հազար դրամ, որը կազմում է վարչական բյուջեի եկամուտների 130,7%-ը, տարեկան պլանի նկատմամբ կատարվելով 1,2%-ով:

Պետական տուրքերի գծով փաստացի եկամուտը կազմել է 10239,9 հազար դրամ, որը կազմում է վարչական բյուջեի եկամուտների 128%-ը, տարեկան պլանի նկատմամբ կատարվելով 0,6%-ով:

Պետական բյուջեից ընթացիկ ներքին պաշտոնական դրամաշնորհներ ստացված կառավարման այլ մակարդակներից նախատեսված 1066867,2 հազար դրամի դիմաց ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիայի մասով հատկացվել է 1060954,4 հազար դրամ, իսկ նպատակային հատկացումներ /այլ սուբվենցիաներ/-ի մասով հատկացվել է 5912,8 հազար դրամ՝ որն ուղղվել է արտադպրոցական կրթության ժողովրդական գործիքների և այլընտրանքային ծառայողների սուբվենցիոն ծրագրերի համար:

Գույքի վարձակալությունից եկամուտների գծով փաստացի եկամուտը կազմել է 26553,0 հազար դրամ, որը կազմում է վարչական բյուջեի եկամուտների 89,9%-ը, իսկ տարեկան պլանի նկատմամբ կատարվել է 1,5%-ով:

Ապրանքների մատակարարումից և ծառայությունների մատուցումից եկամուտները կազմել է 1999,0 հազար դրամ:

Վարչական գանձումներից փաստացի եկամուտը կազմել է 241963,5 հազար դրամ, որը կազմում է վարչական բյուջեի եկամուտների 89,3%-ը, տարեկան պլանի նկատմամբ կատարվել է 13,4%-ով:

Տույժերից և տուգանքներից փաստացի եկամուտը կազմել է 650,0 հազար դրամ, տարեկան պլանի նկատմամբ կատարվելով 65%-ով, որը կազմում է վարչական բյուջեի եկամուտների 0,04%-ը:

Այլ եկամուտների գծով փաստացի եկամուտը կազմել է 88515,7 հազար դրամ, որը կազմում է վարչական բյուջեի եկամուտների 398%-ը:

Ոչ ֆինանսական ակտիվների իրացումից մուտքերը հաշվետու ժամանակաշրջանում կազմում են 128787,6 հազար դրամ, տարեկան պլանի նկատմամբ /366110,8/ այն կատարվել է 35,2%-ով:

<u>Ծախսերի գծով կատարողականը ունի հետևյալ տեսքը .</u>

Հաշվետու ժամանակաշրջանում վարչական բյուջեի փաստացի ծախսը կազմել է 1620478,3 հազար դրամ, տարեկան ճշտված պլանի նկատմամբ /1814776,3/ այն կատարվել է 89,3% -ով (տես հատված 2):

Հաշվետու ժամանակաշրջանում համայնքային բյուջեից 148768.7 հազար դրամն ուղղվել է ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերի ֆինանսավորմանը (տե՛ս հատված 3):

Ընդհանուր բնույթի հանրային ծառայությունների հատվածին հատկացվել է 499412,0 հազար դրամ, որը կազմում է փաստացի կատարված ծախսերի 30,8%-ը:

Տնտեսական հարաբերությունների հատվածին հատկացվել է 32707,7հազար դրամ, որը կազմում է փաստացի կատարված ծախսերի 2,02%-ը :

Շրջակա միջավայրի պաշտպանության համար հատկացվել է 194800,0 հազար դրամ, որը կազմում է փաստացի կատարված ծախսերի 12%-ը:

Բնակարանային շինարարության և կոմունալ ծառայության համար հատկացվել է 17411,5 հազար դրամ, որը կազմում է փաստացի կատարված ծախսերի 1,1%-ը:

Հանգիստ, մշակույթ և կրոն ոլորտի պահպանման համար հատկացվել է 41125,9 հազար դրամ, կազմելով փաստացի կատարված ծախսերի 2,5%-ը:

Նախադպրոցական հիմնարկների պահպանման համար հատկացվել է 454893,2 հազար դրամ, որը կազմում է փաստացի կատարված ծախսերի 28,1%-ը, իսկ արտադպրոցական հիմնարկների պահպանման համար հատկացվել է 338718,1 հազար դրամ, որը կազմում է փաստացի կատարված ծախսերի 21%-ը, բարձրագույն մասնագիտական կրթությանը հատկացվել է 14680,0 հազար դրամ:

Սոցիալական պաշտպանություն ոլորտի համար հաշվետու ժամանակաշրջանում հատկացվել է 26730,0 հազար դրամ:

<u>Ընթացիկ ծախսերից</u> աշխատանքի վարձատրության հոդվածին հատկացվել է 19.5%-ը, ծառայությունների և ապրանքների ձեռք բերմանը՝ 17.8%-ը: Սուբսիդիաների տեսքով ոչ ֆինանսական համայնքային կազմակերպություններին է հատկացվել համայնքի վարչական բյուջեի փաստացի կատարված ծախսերի 57.5%-ը կամ 932214.2 հազար դրամ:

Չարենցավան համայնքի բյուջեի պակասուրդը (դեֆիցիտը) կազմել է 118384,9 հազար դրամ (տե՛ս հատված 4): Պակասուրդի (դեֆիցիտի) ֆինանսավորմանն է ուղղվել տարեսկզբի ազատ մնացորդը՝ 118384,9 հազար դրամ (տե՛ս հատված 4, 5), իսկ հաշվետու ժամանակաշրջանի վերջում բյուջեի հավելուրդը կազմել է 170390,4 հազար դրամ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնք
Հասցե՝ Կ. Դեմիրճյանի անվ. հրապարակ 1
Հեռ.՝ (0226)43434 charentsavan.kotayk@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
«15» հունվարի 2025 թվականի N 3-Ա

ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՄԱՍՆԱԿՑԱՅԻՆ ԲՅՈՒՋԵՏԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ ՍԿՍԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետը, 11-րդ հոդվածը, 13-րդ հոդվածի 10-րդ մասը՝ հաշվի առնելով համայնքի ղեկավարի առաջարկությունը, Չարենցավան համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Չարենցավան համայնքում սկսել 2025 թ.-ի մասնակցային բյուջետավորման գործընթաց:
2. Մասնակցային բյուջետավորմամբ ձևավորված յուրաքանչյուր սուբվենցիոն ծրագրի իրականացման համար համայնքի բյուջեում (ֆոնդային մասում) որպես ֆինանսավորման մասնաբաժին նախատեսել տվյալ ծրագրի համար հայցվող պետական ֆինանսավորման գումարի 20 տոկոսը:
3. Մասնակցային բյուջետավորմամբ ձևավորվող յուրաքանչյուր ծրագրի իրականացման համար ներկայացված առաջարկ – նախագծերի գումարը չպետք է գերազանցի 35000,0 հազ. ՀՀ դրամը:
4. Սամանել մասնակցային բյուջետավորման առաջարկների նախնական գնահատման աղյուսակի ձևաթուղթը՝ համաձայն հավելվածի:
5. Սահմանել, որ քվեարկությանը մասնակցելու իրավունք ունեցողների առնվազն մեկ տոկոսի կողմ ձայների դեպքում առաջարկ-նախագիծը համարվում է հաղթած:
6. Մասնակցային բյուջետավորման գործընթացի իրականացման համար առաջնահերթություն սահմանվում են համայնքի 5 գյուղական բնակավայրերը և 1 քաղաքային բնակավայրեր, և դրանց վերաբերող ոլորտները:
7. Համայնքի ղեկավարին՝

   1) Սույն որոշման 1-ին կետում սահմանված գործընթացը՝ որպես ծրագրային բաղադրիչ, ներառել համայնքի 2025 թվականի ՄԺԾԾ-ում, տարեկան աշխատանքային պլանում և բյուջեում:
   2) Համայնքի բնակիչների կողմից քվեարկության արդյունքում ընտրված առաջարկը/ները/ ներկայացնել ավագանուն:
   3) Իրականացնել վերահսկողություն մասնակցային բյուջետավորման գործընթացի նկատմամբ:

8. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունմանը հաջորդող օրվանից:

Կողմ-17 **դեմ-1** **ձեռնպահ-1**

Առաքելյան Նորայր **Մալխասյան Նորիկ** **Թադևոսյան Նունե**

Բաբայան Արայիկ

Բաբայան Նարեկ

Գևորգյան Գևորգ

Դավթյան Կարեն

Եփրեմյան Բաբկեն

Խաչատրյան Արշակ

Մակինյան Վարդան

Մուքայելյան Վալերի

Շահգալդյան Հակոբ

Վարդանյան Նորայր

Վարդանյան Սարգիս

Վարդանյան Սևակ

Պողոսյան Մնացական

Պալյան Գարիկ

Պետրոսյան Ավետիք

Պապոյան Դավիթ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Հ. Կ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնք
Հասցե՝ Կ. Դեմիրճյանի անվ. հրապարակ 1
Հեռ.՝ (0226)43434 charentsavan.kotayk@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
«15» հունվարի 2025 թվականի N 4-Ն
ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 20-Ի ԹԻՎ 111-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասի դրույթներով՝ հաշվի առնելով, որ Չարենցավան համայնքի 2025 թվականի բյուջեն հաստատվել է 2024 թվականի դեկտեմբերի 20-ին և չի արտացոլվել 2025 թվականի տարեսկզբի պարտքերը և բյուջեի վարչական ու ֆոնդային մասերի ազատ մնացորդները՝ Չարենցավան համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Չարենցավան համայնքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 20-ի «Չարենցավան համայնքի 2025 թվականի բյուջեն հաստատելու մասին» թիվ 111-Ն որոշման հավելվածի 1- 6 հատվածներում կատարել փոփոխություններ:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրը:

Կողմ-13	դեմ-2	ձեռնպահ-4
Առաքելյան Նորայր	Մալխասյան Նորիկ	Բաբայան Նարեկ
Բաբայան Արայիկ	Վարդանյան Նորայր	Թադևոսյան Նունե
Գևորգյան Գևորգ		Խաչատրյան Արշակ
Դավթյան Կարեն		Պալյան Գարիկ
Եփրեմյան Բաբկեն		
Մակինյան Վարդան		
Մուքայելյան Վալերի		
Շահգալդյան Հակոբ		
Վարդանյան Սարգիս		
Վարդանյան Սևակ		
Պողոսյան Մնացական		
Պետրոսյան Ավետիք		
Պապոյան Դավիթ		

Արտաքվեարկությունն ուժի մեջ է հայտով, կարգավիճակ, դրի համար արտաքվեարկում էմ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Հ. Կ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնք
Հասցե՝ Կ. Դեմիրճյանի անվ. հրապարակ 1
Հեռ.՝ (0226)43434 charentsavan.kotayk@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
«15» հունվարի 2025 թվականի N 5-Ա

ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ «ՎԻՏԱԼԵՆԴ» ՍՊԸ-ԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՏԱՐԱԾՔԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԵՎ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ կետով, Հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 10-րդ կետի դրույթներով և հաշվի առնելով «Վիտալենդ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված ճարտարապետահատակագծային առաջադրանքի հայտը. Չարենցավան համայնքի ավագանին ***որոշում է.***

1. ***«Վիտալենդ» ՍՊԸ-ին*** սեփականություն իրավունքով պատկանող 07-008-0220-0007 ծածկագրով 2.33 հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության հողատեսքից 1.92996 հա նպատակային նշանակությունը փոխել որպես արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության գյուղատնտեսական արտադրական հողատեսքի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հաստատմանը հաջորդող օրվանից:

Կողմ-18 **դեմ-1** **ձեռնպահ-0**

Առաքելյան Նորայր
Մալխասյան Նորիկ
Բաբայան Արայիկ
Բաբայան Նարեկ
Գևորգյան Գևորգ
Դավթյան Կարեն
Եփրեմյան Բաբկեն
Թադևոսյան Նունե
Խաչատրյան Արշակ
Մակինյան Վարդան
Մուքայելյան Վալերի

Շահգալդյան Հակոբ

Պալյան Գարիկ

Պապոյան Դավիթ

Պետրոսյան Ավետիք

Պողոսյան Մնացական

Վարդանյան Նորայր

Վարդանյան Սարգիս

Վարդանյան Սևակ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Հ. Կ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնք
Հասցե՝ Կ. Դեմիրճյանի անվ. հրապարակ 1
Հեռ.՝ (0226)43434 charentsavan.kotayk@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
«15» հունվարի 2025 թվականի N 6-Ա

ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԵՎ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ կետով, հիմք ընդունելով «Կոտայք-7» միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման հաստատված գլխավոր հատակագիծը և հաշվի առնելով Ա.Պետրոսյանի և Ս.Սահակյանի ներկայացրած դիմումները,Չարենցավան համայնքի ավագանին ***որոշում է.***

1. ***Արթուր Պետրոսյանին*** սեփականություն իրավունքով պատկանող 07-015-0011-0148 ծածկագրով 0.680383 հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության հողատեսքից 0.2951 հա մակերեսով հողատեսքի նպատակային և գործառնական նշանակությունը փոխել, որպես բնակավայրերի նպատակային նշանակության հասարակական կառուցապատման հողատարածք:
2. ***Սարգիս Սահակյանին*** սեփականություն իրավունքով պատկանող 07-037-0202-0038 ծածկագրով 0.01071 հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության հողատարածքի նպատակային և գործառնական նշանակությունը փոխել, որպես բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման հողատարածք:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հաստատմանը հաջորդող օրվանից:

Կողմ-18 **դեմ-1** **ձեռնպահ-0**

Առաքելյան Նորայր
Մալխասյան Նորիկ
Բաբայան Արայիկ
Բաբայան Նարեկ

Գևորգյան Գևորգ

Դավթյան Կարեն

Եփրեմյան Բաբկեն

Թադևոսյան Նունե

Խաչատրյան Արշակ

Մակինյան Վարդան

Մուքայելյան Վալերի

Շահգալդյան Հակոբ

Պալյան Գարիկ

Պապոյան Դավիթ

Պետրոսյան Ավետիք

Պողոսյան Մնացական

Վարդանյան Նորայր

Վարդանյան Սարգիս

Վարդանյան Սևակ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Հ. Կ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ